

ՏԱՐԲԵՐ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՆՁԱՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԹՈՐԱԿՈՍԿՈՊԻԿ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՊԵԿՏՐԸ

Դալլաթյան Ն.Յ., Կարապետյան Ա.Ռ., Դալլաթյան Դ.Ն., Գևորգյան Ա.Լ.

«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն, Երևան, Հայաստան

Գաղտնիք չէ, որ կրծքավանդակի վրա կատարվող վիրահատություններն առանձնանում են իրենց տրավմատիզմի բարձր աստիճանով, իսկ թոքերի ֆունկցիայի արագ և լիարժեք վերականգնման համար անհրաժեշտ է հիվանդների արագ ակտիվացում: Էնդովիդեոլիրաբուժության ներդրումը նպաստում է այդ խնդրի համալիր լուծմանը: Վերջին հինգ տարիների ընթացքում, «Սուրբ Աստվածամայր» ԲԿ-ում կատարվել է 31 թորակոսկոպիկ միջամտություն՝ 3-18 տարեկան պացիենտների մոտ (19 տղա, 12 աղջիկ): Հիվանդների հետազոտությունների պրոտոկոլը ներառել է կրծքավանդակի ռենտգեն հետազոտություն՝ երկու պրոյեկցիայով, ուլտրաձայնային հետազոտություն, Էլեկտրոսրտագրություն, արյան և մեզի քննություններ, անհրաժեշտության դեպքում՝ կոմպյուտերային տոմոգրաֆիա: Վիրահատությունները կատարվում են ընդհանուր Էնդոտրախեալ անզգայացմամբ: Վերջին ժամանակներս հաջողությամբ կիրառվել է բարձր Էպիդուրալ անզգայացում: Վիրահատված 31 հիվանդներից 8-ի մոտ միջամտությունը կատարվել է ախտորոշման նպատակով: Թորակոսկոպիան անփոխարինելի է նաև կրծքավանդակի խոռոչի տարբեր նորագոյացությունների տարբերակիչ ախտորոշման համար: Բաժանմունքում վերջին 5 տարիների ընթացքում բուժվել է 4-16 տարեկան ֆիբրինոթորաքսով բարդացած դեստրուկտիվ թոքաբորբով տասնհինգ հիվանդ: Թորակոսկոպիայի ներդրումը՝ մեթոդի ատրավմատիկության շնորհիվ, թույլ է տվել մաքսիմալ կարճ ժամկետում վերականգնել հիվանդների ակտիվությունը և փաստված թոքի շնչառական ֆունկցիան: Էնդովիրաբուժության կիրառումը անվիճելի է ատրավմատիկության, վիրաբուժական դաշտի խոշորացման և վիզուալիզացիայի շնորհիվ, որը հնարավորություն է տալիս կատարել թոքամզի խոռոչի մանրամասն ռեփզիա: